ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՊՂՆՁԱՄՈԼԻԲԴԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ» ՓԲԸ

ԶՊՄԿ արտադրության վերազինման մանրամասներին ծանոթացնում է Ընկերության արտադրության գծով տնօրեն
Եվգենի Կունակովը

08

«Հաշվի առնելով ալտերնատիվ էներգետիկայի զարգացումը՝ նավթի դերը նվազելու է, մետաղներինը՝ ավելանալու».
միջֆակուլտետային քննարկում

14

«Առեղծվածային» պոչամբար. Միֆեր և իրականություն.
ԶՊՄԿ-ն ճանաչողական շրջայցեր է կազմակերպել լրագրողների համար

16

ԸՆԴԵՐՔԻՑ ԲԱՐՁՈՒՆՔՆԵՐ

ZCMC
ԶԱՆԳԵԶՈՒՐ ՊՂՆՁԱՄՈԼԻԲԴԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ

№50
2025Թ.



Հանքարդյունաբերությունը միայն տղամարդու գործ չէ, կանայք այստեղ պահանջված են

12

Լուսանկարը՝ Դվեր Չեյմի

Հանքարդյունաբերության կարևորությունը...
Սքանավորիր QR կոդը, դիտի՛ր տեսանյութը

ՀՀ Հանքագործների և մետալուրգների միության նախագահ, Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի գլխավոր տնօրենի առաջին տեղակալ Վարդան Ջհանյանի հարցազրույցը՝ «Economix» հաղորդմանը:

«Հնարավոր չէ գերագնահատել հանքարդյունաբերության կարևորությունը». Վարդան Ջհանյան

Հանքարդյունաբերության ազդեցությունը բնակչության կենսամակարդակի վրա

«Մեր ոլորտն անչափ կարևոր է, և ոչ ոք չի կարող գերագնահատել դրա կարևորությունը: Տնտեսության վրա տեսանելի ազդեցությունների շարքում կարելի է առանձնացնել հարկերը, ՀՆԱ-ի տեսակարար կշիռը և այլ ճյուղերի վրա ազդեցությունը: Բայց տնտեսության վրա անտեսանելի ազդեցություն էլ կա: Սա Հայաստանում միակ ոլորտն է, որտեղ համաշխարհային ցուցանիշների հետ համեմատելի աշխատանքի արտադրողականության բարձր մակարդակ է նկատվում»,– «Economix»-ի հետ հարցազրույցում նշել է Վարդան Ջհանյանը:

Երկրի սոցիալական վիճակը, զարգացման ընդհանուր մակարդակը, մարդկային զարգացման ինդեքսը կախված են աշխատանքի արտադրողականությունից: Միաժամանակ, արտադրողականության բարձր մակարդակով երկրներում մարդկային զարգացման բարձր ցուցանիշ էլ կա, այսինքն՝ մարդիկ ավելի բարեկեցիկ են ապրում: Նա շեշտել է, որ Հայաստանի տարբեր մարզերում նույնիսկ այդ տարբերությունը կա:

«Զարգացած հանքարդյունաբերություն ունեցող Սյունիքի մարզի սոցիալական վիճակն ավելի լավ է՝ Շիրակի մարզի համեմատ, որտեղ նման արդյունաբերություն չկա: Եթե Հայաստանի այլ մարզերում էլ հանքարդյունաբերությունը զարգանա, ամբողջ հանրապետությունում տնտեսության մրցունակությունը կբարձրանա»:

Ուրիշ ի՞նչ ոլորտների հետ է կապված հանքարդյունաբերությունը

Հանքարդյունաբերությունը սերտորեն կապված է գրեթե բոլոր ոլորտների հետ: Անմիջական կապ կարելի է գտնել էներգետիկայի հետ, քանի որ էլեկտրաէներգիայի մոտ 30-40%-ը սպառում է հանքարդյունաբերությունը: ԶՊՄԿ-ն հանրապետությունում էլեկտրաէներգիայի սպառման առաջատարն է: Էներգիայի այլ աղբյուրների (դիզվառելիք, բենզին, գազ) դեպքում ոլորտը ևս կարևոր սպառող է:

«Հանքարդյունաբերությունը շոշափելի ազդեցություն ունի նաև տրանսպորտի ոլորտի վրա: «Հարավկովկասյան երկաթուղու» գլխավոր գործընկերը մեր ոլորտն է, առանց որի այդ ընկերության շահույթը կարող էր մի քանի անգամ կրճատվել»,– ասել է նա:

Կարելի է բազում նման օրինակներ բերել: Առանց հանքարդյունաբերության մյուս ոլորտները չափազանց թույլ կդառնան կամ չեն կարողանա շահութաբեր գործունեություն ծավալել:

Հայաստանի ներուժը համաշխարհային շուկայում

«Հանքարդյունաբերական ոլորտի ամբողջ ներուժը չի օգտագործվում, իսկ դրա հետևանքով համաշխարհային հանքարդյունաբերության ոլորտում մեր դերն այնքան էլ բարձր չէ: Հայաստանն արտադրում է համաշխարհային պղնձի ընդամենը 0,2-0,3%-ը: Ընդ որում, պղնձի համաշխարհային շուկայի ծավալը նավթի շուկայից 10 անգամ փոքր է: Բայց նույնիսկ այս պարագայում, ոլորտը Հայաստանի տնտեսության մեջ կարևոր դեր է խաղում: Նավթի դերը ժամանակի ընթացքում նվազելու է, մինչդեռ պղնձի դերը մեծանալու է: Բոլոր կանխատեսումներով՝ 10-15 տարի անց ռեսուրսների շուկայում պղինձը կարող է փոխարինել նավթին: Հայաստանը, ունենալով նման պաշարներ, պետք է օգտվի դրանից և մեծացնի իր դերը պղնձի համաշխարհային շուկայում՝ ավելացնելով արտադրության ծավալները: Այդ դեպքում ոլորտը կարող է շատ ավելի մեծ ազդեցություն ունենալ տնտեսության վրա:

Նույն պոտենցիալն է մոլիբդենի պարագայում, որն օգտագործվում է նաև այլընտրանքային էներգետիկայի գրեթե բոլոր ճյուղերում»,– հավելել է Հանքագործների և մետալուրգների միության նախագահը:

Հանքարդյունաբերության զարգացման հիմնախնդիրները

Հանքագործների և մետալուրգների միության նախագահը ՀՀ կառավարության կողմից ԶՊՄԿ-ում բաժնետոմսերի ձեռքբերումը դրական երևույթ է անվանել, քանի որ դա հնարավորություն է ընձեռում հանրությանը, աշխատակիցներին և կառավարությանը համոզվելու, որ սա «անհասկանալի» ոլորտ չէ՝ մեծացնելով հասարակության վստահությունը ոլորտի նկատմամբ:

«Առայժմ հստակ դիրքորոշում չի ուրվագծվել: Սա հասկանալը կարևոր նշանակություն ունի բիզնեսի վարքագծի տեսանկյունից՝ նույն երկրաբանահետախուզական աշխատանքների հարցում, որոնք կարգին չեն էլ անցկացվում: Հայաստանի հազվագյուտ մետաղների ներուժը գնահատելու համար անհրաժեշտ է երկրաբանահետախուզական լայնածավալ աշխատանքներ իրականացնել: Հուսով եմ՝ կառավարությունը կկարևորի դրա նշանակությունը, և ներդրումներ կարվեն: Բիզնեսը պետք է հասկանա՝ արժե՞ ապավինել կառավարության աջակցությանը, թե՞ պետք է հույսը դնել սեփական ռեսուրսների վրա: Հաշվի առնելով, որ այս ոլորտում փոխհատուցումը երկարաժամկետ բնույթ ունի, պետք է հասկանալ՝ պետությունը նվազեցնո՞ւմ է ռիսկերը, թե՝ ոչ: Մենք դրական ազդակներ ենք տեսնում մի քանի տարի առաջ ոլորտի զարգացման ռազմավարությունը որդեգրած կառավարության կողմից, բայց, միևնույն ժամանակ, այդ դիրքորոշման հստակ դրսևորում չկա»,– ասել է նա:

ԶՊՄԿ կայուն զարգացման ռազմավարության (ESG) մասին

«Քանի որ սա երկարաժամկետ ոլորտ է, այս ոլորտի ընկերությունները կայուն զարգացման ասպեկտը չեն կարող անտեսել: Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը՝ որպես ոլորտի խոշորագույն ձեռնարկություն, մեծ նշանակություն է տալիս ESG-ին և ոլորտի մյուս ընկերությունների համար ձգտում է օրինակ դառնալ»,– ընդգծել է Ջհանյանը:

Արդեն երրորդ տարին անընդմեջ կոմբինատը կայուն զարգացման տարեկան հաշվետվություն է հրապարակում՝ նկատի ունենալով լավագույն համաշխարհային չափանիշները, ինչպես նաև ձգտում է ապահովել, որ ընկերության սպառած ամբողջ էլեկտրաէներգիան արտադրվի «կանաչ» էներգիայի միջոցով:

«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը հայտարարել է, որ 100 Մվտ հզորությամբ արևային էլեկտրակայանի կառուցման հայտ է ընդունում: Սա աննախադեպ է, քանի որ Հայաստանն այդքան խոշոր արևային կայան չունի: Բայց անգամ այս ամենով հանդերձ՝ այն կապահովի կայանի էլեկտրաէներգիայի պահանջարկի միայն 21%-ը: Հետևաբար պետք է ձգտենք նրան, որ օգտագործելով էլեկտրաէներգիայի կուտակման սարքերը հասնենք 100%-անոց արդյունքի: Սա խթան կլինի, որ ամբողջ երկիրն ինչորոշ պահի ամբողջությամբ կանաչ էներգիայի անցնի: Մենք նման ներուժ ունենք, և դրա իրականացումը ներկրվող էներգառեսուրսների կախվածությունից ազատվելու հնարավորություն կընձեռի»,– ասել է Վարդան Ջհանյանը:

ԶՊՄԿ-ն հայտարարել է վերականգնվող էներգետիկայի արդյունաբերական նշանակության նախագծերի մրցույթ

Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի կողմից սպառվող էլեկտրաէներգիան վերականգնվող էներգիայի աղբյուրների փոխակերպման ծրագրի շրջանակներում հայտարարել է մրցույթ:

Ներկայումս ընդունվում են արևային ֆոտովոլտային կայանների նախագծման, համապատասխան հողային տարածքների առաջարկի ներկայացման, ֆինանսավորման, կառուցման, տնօրինման և շահագործման աշխատանքներ իրականացնելու համար նախարարակավորման փուլի հայտերը:

ԶՊՄԿ-ն այս ծրագրով նպատակ ունի ոչ միայն նվազեցնել սեփական ածխածնային հետքը՝ միաժամանակ կրճատելով գործառնական ծախսերը, այլև ներդրում ունենալ Հայաստանի Հանրապետության սեփական էներգահամակարգի անկախության աստիճանի բարձրացման գործում: Այս մրցույթի հայտարարումը ծրագրի իրականացմանն ուղղված առաջին կարևոր քայլն է: Ընկերությունն ակնկալում է մրցույթին հայաստանյան և ոչ միայն հայաստանյան կազմակերպությունների մասնակցությունը:

Արդիականացման ծրագրի շրջանակներում ՀՊՄԿ-ն կկառուցի նոր պոչատար և մասնակի շրջանառու ջրամատակարարման նոր համակարգ

Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը նախատեսում է կառուցել ամբողջովին նոր և համեմատաբար մեծ տրամագծով պոչատար խողովակաշար, ինչպես նաև ծրագրել է կառուցել մասնակի շրջանառու ջրամատակարարման համակարգ:

Այս երկու խոշոր նախագծերն ուղղված են կոմբինատի արդիականացմանը: Ծրագրի իրականացման համար պահանջվում է անցկացնել երեք հանրային լսում, որից երկուսն արդեն կայացել է: Կոմբինատում նախընտրել են հիմնանորոգել ոչ թե հին և մաշված խողովակաշարերը, այլ կառուցել լիովին նոր պոչատար խողովակաշար: **«Վթարների ռիսկը նվազեցնելու համար որոշում է կայացվել նոր խողովակաշար կառուցել՝ 1200 մմ տրամագծով, ներսից ներպատումային շերտով, որը կդառնա մեր հիմնական խողովակաշարը»,**– նշել է ՀՊՄԿ-ի տեխնիկական տնօրեն Արման Վարդանյանը:

Նա շեշտել է, որ ներկայումս դյուկերային անցումների հատվածներում երեքական խողովակաշար կա, մեկը հիմնականն է՝ 1000 մմ տրամագծով: Այն ներսից պատված է հատուկ կայուն նյութով՝ ներպատումով, որը թույլ չի տալիս, որ խողովակաշարը արագ մաշվի: **«Մյուս՝ 700 մմ-անոց երկու խողովակաշարերը ծառայում են որպես պահեստային, երբ հիմնական խողովակաշարը վերանորոգվում է: Նորի կառուցումից հետո պահեստայինները կապամոնտաժվեն, քանի որ դրանց կարիքն այլևս չի լինի»,**– ասել է Վարդանյանը:

Կոմբինատի պատմության ընթացքում վթարները տեղի են ունեցել հիմնականում դյուկերային անցումներում: Դրանց նպաստել է նաև աշխարհագրական բարձր դիրքը: **«Նոր խողովակաշարը կկառուցվի հանքարդյունաբերության ժամանակակից չափորոշիչներով և բարձր սեյսմակայունությամբ: Հաշվի առնելով, որ ամենառիսկային հատվածները դյուկերային անցումներն են, խորհրդային ժամանակաշրջանում այդ երրորդ դյուկերից ազատվել են՝ կառուցելով նոր թունել: Եվ եղել է նման ծրագիր նաև երկրորդ դյուկերից ազատվելու համար, որը կիսատ է մնացել ԽՍՀՄ փլուզման հետևանքով, և այժմ մենք ցանկանում ենք վերականգնել նաև այդ ծրագիրը»,**– հայտնել է ՀՊՄԿ-ի տեխնիկական տնօրենը՝ հավելելով, որ կառուցվելիք նոր պոչատար խողովակաշարը կունենա արտահոսքի ռիսկից պաշտպանության լրացուցիչ համակարգ, ինչը շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցության նվազեցման ևս մեկ երաշխիք է:

Հաջորդ բնապահպանական կարևոր նախագիծը՝ մասնակի շրջանառու ջրամատակարարման համակարգն է: «Խտացուցիչ» կոչվող նոր կառույցը նպատակ ունի առավել արդյունավետ դարձնել արտադրությունում ջրի կառավարման ծրագիրը: Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը մեկ տոննա հանքաքարի մշակման համար բնությունից վերցնում է երկու խորանարդ մետր տեխնիկական ջուր: Կորզումից հետո հանքաքարի մնացորդները և տեխնիկական ջուրը միախառնվելով՝ վերածվում են խյուսի և հոսում դեպի պոչամբար, իսկ նոր խտացուցիչը գործընթացն առավել արդյունավետ կդարձնի:

«Տարեկան վերամշակում ենք 22 մլն

> *Կառուցվելիք նոր պոչատար խողովակաշարը կունենա արտահոսքի ռիսկից պաշտպանության լրացուցիչ համակարգ, ինչը շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցության նվազեցման ևս մեկ երաշխիք է:*

տոննա հանքաքար, ինչը նշանակում է, որ տարեկան բնությունից վերցնում ենք և ուղարկում պոչամբար մոտավորապես 45-46 մլն խմ ջուր: Մեր նպատակն է՝ այդ ջրի մի մասը հարստացուցիչ ֆաբրիկայի մոտ վերցնել խյուսի միջից և նորից հետ ուղարկել ֆաբրիկա, օգտագործել դրա մշակման համար: Խյուսը խտացնելու ենք մինչև 40% չորամասնիկների, ինչը կնշանակի, որ տարեկան մոտ 12-15 մլն խմ ջուր բնությունից չենք վերցնի»,– պարզաբանել է Արման Վարդանյանը՝ հավելելով, որ 50 մետր տրամագծով ժամանակակից խտացուցիչը պետք է ձեռք բերվի օգտակար հանածոների վերամշակման ոլորտում համաշխարհային հայտնի արտադրող ընկերությունից:

Վերը նշված այս երկու խոշոր ծրագրերն ուղղված են բնապահպանական և տեխնիկական ռիսկերի նվազեցմանը, որոնք կոմբինատի առաջնային խնդիրներից են:

Վերականգնվող էներգիան՝ շրջակա միջավայրի պաշտպանության երաշխիք

DeGrussa արևային էներգիայի նախագիծը, որը գտնվում է Արևմտյան Ավստրալիայի Պերտ քաղաքից մոտ 900 կմ հյուսիս-արևելք՝ DeGrussa պղնձի հանքավայրի մոտ, մեկնարկել է 2016 թվականին: Նախագիծը ներառում էր 10.6 ՄՎտ հզորությամբ արևային պանելներ և 6 ՄՎտ հզորությամբ լիթիումային մարտկոցային համակարգ: Այս համակարգերը ապահովում էին հանքավայրի էլեկտրաէներգիայի պահանջարկի մոտ 20%-ը:

Նախագծի ընդհանուր արժեքը կազմում էր շուրջ 40 միլիոն դոլար: Արևային էներգիայի արտադրությունը տարեկան կազմում էր մոտ 20 ԳՎտ/ժ, ինչը թույլ էր տալիս նվազեցնել ածխածնի արտանետումները մոտ 15,000 տոննայով: Մարտկոցային համակարգը կարողանում էր պահեստավորել մինչև 1.4 ՄՎտ/ժ էներգիա և ապահովել էներգամատակարարումը մինչև երեք օր առանց արևային արտադրության:

Նախագծի իրականացման ընթացքում տեղական համայնքներին տրամադրվել է ավելի քան 200,000 դոլար՝ կրթական և սոցիալական ծրագրերի համար: Բացի այդ, ստեղծվել է ավելի քան 50 աշխատատեղ՝ ազդակիր համայնքների բնակիչների համար, ինչը նպաստել է տարածաշրջանային տնտեսական զարգացմանը:

DeGrussa արևային էներգիայի նախագիծը հաջողությամբ գործել է յոթ տարի՝ 2016 թվականից մինչև 2023 թվականը: 2023 թվականին հանքավայրի շահագործման ավարտի հետ միասին, արևային կայանը նույնպես դադարեցրել է իր գործունեությունը: Նախագիծը համարվում էր Ավստրալիայի առաջին խոշոր հանքային նախագիծը, որն ամբողջությամբ օգտագործում էր վերականգնվող էներգիա, և ծառայում էր որպես օրինակ այլ հանքարդյունաբերական ընկերությունների համար՝ վերականգնվող էներգիայի օգտագործման և շրջակա միջավայրի պաշտպանության ոլորտում:

ՀՊՄԿ արտադրության վերազինման մանրամասներին ծանոթացնում է Ընկերության արտադրության գծով տնօրեն Եվգենի Կունակովը

– Պարոն Կունակով, պարզաբանեք խնդրեմ, ներկայումս ինչպիսի՞ նոր տեխնոլոգիաներ, սարքավորումներ է ներդնում Ընկերությունը արտադրական պրոցեսում:

– Նախ պիտի նշեմ, որ 2025 թվականը արտադրության համար մեկնարկային տարի է: Հիմնական խնդիրը՝ արտադրության արդիականացումն է: Մենք ունենալու ենք արդիականացման և ավտոմատացման նոր համակարգ, որը վերահսկելու է բոլոր արտադրական գործընթացները: Մանրամասնեմ՝ բացահանքի համար ներդրվելու է նոր՝ ՀՏՀ ԱԿՀ համակարգ (հանքարդյունաբերական տրանսպորտային համալիրի ավտոմատ կառավարման համակարգ). (АСУ

Հանքային ողջ տեխնիկան համալրված է բորտ-համակարգիչներով, միավորված՝ մեկ ամբողջական համակարգում: Եվ ծագած ցանկացած խնդիր տեսնում են համապատասխան մասնագետները, սպասարկող ինժեներները:

ГТК - автоматическая система управления горнотранспортным комплексом) սա դիսպետչերական հսկողություն է՝ հանքարդյունաբերական տրանսպորտային համալիրի արտադրողականությունը բարձրացնելու համար:

Օրինակ, պատկերացնենք բարձման պրոցեսը. ինքնաթափը մոտենում է էքսկավատորին՝ բարձվելու, իսկ վերջինս այդ ժամանակ լիցքավորվում է, բնականաբար, բեռնատարը սպասելու է, ինչի արդյունքում հերթ է գոյանալու: Ավտոմատացումը թույլ կտա խուսափել հերթերից, քանի որ համակարգը ինքնաթափը «կուղարկի» ազատ էքսկավատորի մոտ:

Հաշվարկում է երթուղին, և նույնիսկ լցակայաններում՝ ընդմիջումից առաջ և հետո, նաև բարձվելու ժամանակ, հերթեր չեն գոյանա:

Բայց այս ամենին զուգահեռ, աշխատակիցները պետք է միանշանակ հետևեն համակարգի կողմից տրվող հրահանգներին:

– Իսկ ի՞նչ ենք ունենալու հարստացուցիչ ֆաբրիկայի համար:

– Հարստացուցիչ ֆաբրիկայում ներդրվում է MES (Manufacturing Executive System) համակարգը, որը ցույց կտա, թե ինչպես է աշխատում արտադրամասը, սակայն թույլ չի տա կառավարել արտադրական պրոցեսը: Վերջինս հնարավոր կլինի միայն՝ վերջնական ավտոմատացումից հետո:

Բոլոր տվյալներն անմիջապես կուղարկվեն նորմավորողներին, տնտեսագետներին և հաշվապահական հաշվառման բաժին: Ավտոմատացման նպատակը՝ ձեռնարկության արդյունավետ աշխատանքն է, հնարավոր սխալներից խուսափելը, ինչի շնորհիվ աշխատակիցներն ավելի հանգիստ ու ապահով կզգան իրենց:

– Հետաքրքիր է՝ ինչպե՞ս է համակարգն արձագանքելու առաջացած անսարքություններին:

– Միասնական համակարգն ընդգրկում է ողջ հանքային տեխնիկան, խնդիրների դեպքում համապատասխան սպասարկող մասնագետն անմիջապես տեսնում է՝ ինչ պրոբլեմներ են արձանագրված ծրագրում:

Հանքային ողջ տեխնիկան համալրված է բորտ-համակարգիչներով, միավորված՝ մեկ ամբողջական համակարգում: Եվ ծագած ցանկացած խնդիր տեսնում են համապատասխան մասնագետները, սպասարկող ինժեներները:

– Ինչպիսի՞ն է իրավիճակը աշխատողների վերապատրաստման և որակավորման բարձրացման հետ կապված: Արդյոք խնդիրներ կառաջանան՝ աշխատակիցների լիազորությունների կրճատման կամ ռեժիմի խստացման առումներով:

– Մեր ձեռնարկության ուսումնական կենտրոնը մշտապես կազմակերպում է ուսուցում, վերապատրաստում և որակավորման բարձրացման քննություններ:

Արտադրական վտանգավոր օբյեկտներում գործունեություն իրականացնող մեր աշխատակիցները համապատասխան վկայականներ ունեն, նաև պարբերաբար վերապատրաստվում են: Այս ամենը շահագրգռում է մարդկանց, նաև ստիպում՝ տեղում չկանգնել...

Լուսանկարները՝ Նվեր Զելյայի

ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՎՏՈՀԱՎԱՔԱԿԱՅԱՆԻ ՀԱՆՔԱՅԻՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ՑԱՆԿԸ

ԱՎՏՈԻՆՔՆԱԹԱՓԵՐ

CAT 90 տոննա	12
BELAZ 90 տոննա	12
KOMATSU 95 տոննա	16
CAT 130 տոննա	8
BELAZ 130 տոննա	14
CAT 180 տոննա	3

ՋՐՑԱՆՆԵՐ

BELAZ	5
LGMG	3

Տեխնոլոգիական ավտոհավաքակայանի տեխնիկական վերազինման մանրամասները ներկայացնում է արտադրամասի ղեկավար՝ Գևորգ Հովհաննիսյանը

– 2024 թվականին ձեռք է բերվել ԲԵԼԱԶ մակնիշի 130 տոննա բեռնատարողությամբ 14 ինքնաթափ, որից 10-ը շահագործման ենք հանձնել արդեն 2024-ին, սակայն հանքային տեխնիկայի վերազինումն այսքանով չի սահմանափակվում: Վերջերս 130 և 180 տոննա բեռնատարողությամբ Caterpillar և BELAZ մակնիշի ավտոինքնաթափերի համար տեխնոլոգիական ավտոհավաքակայանում առանձնացվել է տեղամաս, ինչի արդյունքում վերոնշյալ ինքնաթափերի երթուղին կրճատվել է 4-5 կմ-ով: Ժամանակի ու վառելիքի լուրջ խնայողություն է ապահովվում, նաև՝ խնայում ենք անվադողերի մաշվածության առումով:
Թվով 25 բարձր բեռնատարողությամբ ինքնաթափեր հերթափոխային ռեժիմով շահագործում է 100 վարորդ: Նրանք կայանելու են նոր տեղամասում, և հենց նրանց երթուղին է զգալիորեն կրճատվում:
Արտադրական օղակներում նման ձեռնարկումները խիստ անհրաժեշտ են՝ պայմանավորված աշխատանքների էֆեկտիվ կազմակերպման հետ:
Տեղամասի աշխատակիցների

թիվը 2024 թվականին ավելացել է 60-ով, ովքեր հաջողությամբ անցել են վերապատրաստում, ատեստավորում: Նշենք՝ բոլոր 60-ը Ընկերության աշխատակիցներն են, որոնք տեղափոխվել են այլ արտադրամասերից:

– Ինչո՞վ է պայմանավորված՝ կադրերի հոսքը դեպի տեխնոլոգիական ավտոհավաքակայան:

– Աշխատանքը հեշտերից չէ: Շահագործել հսկաներին հանքային ճանապարհներին, եղանակային տարբեր պայմաններում, հմտություն, համարձակություն, կամք ու մեծ ցանկություն է պահանջում և ենթադրում է պատշաճ վարձատրություն, իսկ վերջինս, բնականաբար, մոտիվացնում է մարդկանց: Տեղափոխված աշխատակիցների մեծ մասը երիտասարդներ են, ովքեր արագ են ինտեգրվում: Սակայն ունեցել ենք դեպքեր, երբ վերապատրաստման ժամանակ մարդիկ հասկացել են՝ այս աշխատանքն իրենցը չէ...

Լիլիթ Իսրայելյան

Լուսանկարները՝ Նվեր Զեյայի

Սյունիքի մարզի ՀՆԱ-ի կեսից ավելին ապահովում է հանքագործական արդյունաբերությունը. Հայկազ Ֆանյան

Հանքարդյունաբերության ոլորտի մասին «Iravaban.net»-ի հետ զրուցել է տնտեսագետ, Modex խորհրդատվական ընկերության տնօրեն Հայկազ Ֆանյանը:

ՀԱՆՔԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՐԿԱՅԻՆ ԲԵՌԸ ՄԻՋԻՆԻՑ ԶԳԱԼԻՈՐԵՆ ԲԱՐՁՐ Է...

1000 խոշոր հարկատուների ցանկում ընդգրկված հարկ վճարողների վճարած հարկերը, 2019-2024/9 թթ.



«Հանքարդյունաբերությունը բավականին առանցքային դեր է կատարում մեր ՀՆԱ-ում, և ըստ էության, իր հետևից շատ տարբեր ոլորտներ է զարգացնում: Վառ օրինակներից մեկը ԶՊՄԿ-ի գործունեությունն է. Սյունիքի մարզի ՀՆԱ-ի կառուցվածքում կեսից ավելին հենց հանքագործական արդյունաբերությանն է բաժին ընկնում: Դա, իհարկե, միայն ԶՊՄԿ-ն չէ, կան նաև Կապանի հանքավայրը, կա Ագարակի հանքը, սակայն ԶՊՄԿ-ն ամենամեծն է»,– ասել է Ֆանյանը: ՀՆԱ-ի կառուցվածքում անցած տարվա 9 ամիսների կտրվածքով հանքարդյունաբերության մասնաբաժինը շուրջ երեք տոկոս է կազմել:

«Օրինակ՝ ոչ մետաղականների մասով, եթե նայենք, ավազը պետք է լինի, որը կդառնա ապրանքային բետոն, ապրանքային բետոնով արդեն շինարարություն կիրականացվի և այսպես շարունակ: Այսինքն, այդ ապրանքային բետոնի արտադրությունը, պանելների արտադրությունը, որը էականորեն, կարելի է ասել, հիմնված է հենց հանքագործական արդյունաբերության արտադրանքի վրա, առանց դրա հնարավոր չէր»: Միևնույն ժամանակ, Ֆանյանը նշում է, որ չի հաշվարկվում ազդակիր համայնքներում հանքարդյունաբերության ազդեցությունը. **«Սյունիքի մարզի ՀՆԱ-ի կեսից ավելին ապահովում է հանքագործական արդյունաբերությունը՝ 51.7%: 2022 թվականի տվյալներն են, պաշտոնապես Վիճակագրական կոմիտեի կողմից հաշվարկված: Սա շատ-շատ բաձր ցուցանիշ է: Պատկերացնո՞ւմ եք՝ տնտեսության կեսը հանքագործական արդյունաբերության հաշվին է»:**

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՀՆԱ-Ի ԿԵՍԻՑ ԱՎԵԼԻՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ Է ՀԱՆՔԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ

Սյունիքի մարզի ստեղծած ավելացված արժեքը, 2019-2022թթ.



Սյունիքի մարզի ՀՆԱ-ի կառուցվածքը, 2022թ.



Օրական մեկ տոննայից ավելի սննդամթերքով բազմատեսակ ուտեստներ են պատրաստվում ՀՊՄԿ ճաշարանում

Նախկինում՝ համբուրգերներ, հիմա արդեն տաք սնունդ՝ լանչ բոքսերի տեսքով:

Առանց դադարի, երկու հերթափոխով 85 մարդ ձեռնարկության 4600 աշխատակցի համար պատրաստում է թարմ և համեղ կերակուր: Ձավարեղեն, մսեղեն, բանջարեղեն՝ ամեն ինչ հաստատված գրամներով, պահեստից գալիս՝ խոհանոցում ճաշատեսակների են վերածվում: Փաթեթավորման արտադրամաս են ուղարկվում տարատեսակ ճաշեր, աղցաններ, երշիկեղեն, խմորեղեն՝ լանչ բոքսերի մեջ հավաքվելու: Բացահանքից մինչև պոչամբար, նաև Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատում աշխատակիցները ընդմիջմանը ստանում են սիրով ու խնամքով պատրաստված լանչ բոքսերը, իսկ ահա վարչական շենքի և դրան մոտ արտադրամասերի աշխատակիցները հիմնականում օգտվում են ճաշարանի տաք սննդից:

Ճաշարանի հիմնական աշխատանքների համակարգող Աննա Ալեքսանյանը նշում է. «**Մնունդը պատրաստվում է գիշերը, ինչն առավել ծանր ու պատասխանատու աշխատանք է: Երեք տարի է առաքումը կատարվում է տաք սննդի տեսքով: Օրական չորս մեքենա դուրս է գալիս առաքումը իրականացնելու՝ բացահանքից մինչև պոչամբար**»,– պատմում է նա:

Ավագ խոհարար Կարեն Գրիգորյանը համեղ պատրաստելու իր գաղտնիքներն ունի: Խոհանոցում մեծամասնություն կազմող կանանց ներկայությունն անհրաժեշտ է, բայց տղամարդիկ էլ այս գործում պակաս հմուտ չեն: Խիստ դեմքով համի տիրակալը՝ պատրաստելիս հաճախ չի ժպտում, բայց իգական սեռի հետ աշխատանքների համակարգման ոսկե միջինը գտել է. «**Ունենք ծավալուն մենյու, շաբաթական մեկ անգամ այն փոփոխման է ենթարկվում, ճաշացանկերը նախապես համաձայնեցվում են ընկերության ղեկավարության հետ: Շատ դժվար է 4600 մարդու ամեն օր սնունդով ապահովելը, մանավանդ, որ մարդիկ տարբեր համային նախասիրություններ, ինչու չէ՝ նաև տարբեր տրամադրություն ունեն: Բացի այդ, դժվար է կանանց հետ աշխատելը, բայց փորձել եմ գտնել ոսկե միջինը: Մեր խոհանոցում միշտ կարգուկանոն է տիրում:**

Սքանավորիր QR կոդը, դիտի՛ր **ՀՊՄԿ ճաշարանի մասին տեսանյութը**

ԱՆՆԱ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
Ճաշարանի հիմնական աշխատանքների համակարգող

ԱՆՆԱ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ
Փաթեթավորման արտադրամասի պատասխանատու

Սա պատասխանատու և բարդ աշխատանք է, ամեն մարդ իր գործը պետք է ճշգրիտ, մաքուր և ժամանակին կատարի,– ասում է ավագ խոհարար Կարեն Գրիգորյանը,– **այլապես՝ հնարավոր չէ այդքան մարդու ամեն օր ճիշտ նույն ժամին կերակրել և գոհ ճանապարհել»:** Եվ հետաքրքիր է, որ երբեք սնունդը չի պակասում, այն չի պատրաստվում կոնկրետ մարդկանց քանակով, այլ հաշվի է առնվում, որ մարդը կարող է հավելյալ բաժին ուզել, ու դա պետք է լինի: Գաթան ու աղցանը, հյութերն ու մուրաբաները դրված են առանց սահմանափակման, կեր, անուշ արա՝ որքան ուզում ես:

Կնոջ ձեռքը ամենահամեղն է, կարծում է խոհարար տիկին Միլան: Ամեն օր հազարավոր աշխատակիցների համար ուտեստ պատրաստելուն նա արդեն սովոր է, ժամանակակից տեխնիկան գործին օգնում է, բայց քիմքի համն ամենակարևորն է: **«Էնքան մեծ շերեփներ եմ օգտագործել այստեղ, որ փոքրի մասին մոռացել եմ, տանը անսովոր է փոքր շերեփով ճաշ եփելը: Դե իսկ տանը ուտելիքը կարող է համեղ լինել, կամ երբեմն՝ ոչ այնքան, մինչդեռ աշխատավայրում առանց բացառության միշտ պետք է համեղ լինի: Կարծում եմ՝ մեր աշխատակիցները ճաշատեսակներից գոհ են»:**

Վեց արտադրամասից յուրաքանչյուրն ունի հստակ պարտականություններ: Փաթեթավորման արտադրամասում ամեն վայրկյանը թանկ է, պետք է կարողանան որքան հնարավոր է արագ տեղավորել տաք ուտելիքը և այն ճիշտ ժամանակին հասցնել նպատակակետին. **«Արագությունն ու արկղերը մեր արտադրամասում ամենակարևորն են, առավոտյան 8-ից սկսվում է առաքումը, պետք է ըստ ժամերի սնունդը հասցնել աշխատողներին, եթե համերաշխ ու համակարգված չաշխատենք, չենք հաջողի»,**– նշում է փաթեթավորման արտադրամասի պատասխանատու Աննա Մնացականյանը:

Բացահանքի տեխնոլոգիական ավտոհավաքակայանում ամեն օր ժամը 12-ին հետաքրքիր իրարանցում է սկսվում: Տիկին Հեղինեն գլխավոր դերում է՝ 5 տարի շարունակ բազմատեսակ ուտելիքի բաժանման հաճելի գործը նրա ուսերին է. **«Բոլորս օգտվում ենք սննդից՝ համատեղելով օգտակարը հաճելիի հետ: Համ սնվում ենք, համ սիրած աշխատանքով զբաղվում»:**

Աշխատակիցները կատակում են՝ ուզած-չուզած պիտի ուտենք, բայց իհարկե, եթե սնունդը չլիներ որակյալ ու համեղ, ապա չէին շեշտի, որ աղցանները շատ համեղ են, անգամ պարզ հնդկաձավարն այստեղ կարողանում են համեղ պատրաստել, այլ ուտեստներից էլ չեն հրաժարվում. **«Երբ սոված ենք լինում, ամեն ինչ էլ ուտում ենք, ինձ համար, օրինակ, ամենահամեղը կարտոֆիլի պյուրեն է»,**– ասաց տեխնոլոգիական հավաքակայանի ավտոինքնաթափի վարորդ Էդգար Զաքարյանը՝ ընդգծելով, որ անգամ ամենասովորական կարտոֆիլային խյուսը այս խոհանոցում շատ համեղ են պատրաստում:

Չնայած հաստատված սննդակարգին, այնուամենայնիվ, այստեղ բաց են առաջարկների համար, առկա ճաշացանկը կարող է թարմացվել՝ նաև ըստ աշխատակիցների նախասիրությունների:

Նարե Խաչատրյան

Լուսանկարները՝ Նվեր Զեյայի

ՄԻԼԱ ԱՌԱՔԵԼՅԱՆ
Խոհարար

ԿԱՐԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ
Ավագ խոհարար

Հանքարդյունաբերությունը միայն տղամարդու գործ չէ, կանայք այստեղ պահանջված են

«Ոչ կնոջ աշխատանք» կարծրատիպը կոտրում են ԶՊՄԿ-ում, որտեղ չկա առանց կնոջ միջամտության գոնե մեկ արտադրամաս:

Հանքարդյունաբերության կանայք...
Սքանավորիր QR կոդը, դիտի՛ր տեսանյութը

Դենց դա՝ կանանց ներկայությունն ամենուր, համարվում է արդյունավետ աշխատանքի գլխավոր գրավականը: Չխախտելով ավանդույթը՝ այս տարի էլ կանանց տոնի մեկամսյակի շրջանակում զրուցել ենք կոմբինատի կին աշխատակիցների հետ:

ԶՊՄԿ-ի ավելի քան 4600 աշխատակիցներից 1036-ը կանայք են: Բոլորն էլ սիրված ու գնահատված են աշխատավայրում: Կանանց հետ աշխատելու երկարամյա փորձ ունեցող կոմբինատի էներգաարտադրամասի ղեկավար Արմեն Պողոսյանն այս մտքին ավելացնում է՝ կանայք մեկամսյակի առթիվ տղամարդկանցից նաև նվերներ են սպասում: Ասում է՝ նրանց հետ աշխատելը և հեշտ է, և դժվար, պարզապես պետք է կարողանալ կանանց հետ լեզու գտնել:

Տիկին Նինա Վասիլյանը հարստացուցիչ ֆաբրիկայի շարժիչ ուժն է: Երկարամյա փաթեթավորող է, ու ոչ թե ծաղիկներ է փաթեթավորում, այլ՝ մոլիբդենի տոննանոց պարկեր: Ասում է՝ գյուղում ապրած-մեծացած 29-ամյա աղջիկ էր, երբ առաջին անգամ մտավ կոմբինատ: Համաձայն չէ այն մտքի հետ, որ ֆիզիկական գործը միայն տղամարդկանց համար է: Իր արտաքին տվյալները՝ բարձր հասակը, ամուր ձեռքերը, ինչպես նաև ուժեղ բնավորությունը թույլ են տալիս կատարել նաև ֆիզիկական աշխատանք և ինքը դեմ չէ:

Արտադրության կանայք ոչ պակաս խնամված են, պահանջված ու գնահատված. ասվածի հետ համաձայն են ԶՊՄԿ-ում, ավելին՝ այստեղ աշխատող կանայք վստահ են՝ առանց իրենց մասնակցության պղինձ ու մոլիբդեն կորզելը պարզապես անհնար կլիներ:

Պակաս հետաքրքիր չէ նաև Աննա Ստեփանյանի գործը:

Արտադրության կանայք ոչ պակաս խնամված են, պահանջված ու գնահատված. ասվածի հետ համաձայն են ԶՊՄԿ-ում, ավելին՝ այստեղ աշխատող կանայք վստահ են՝ առանց իրենց մասնակցության պղինձ ու մոլիբդեն կորզելը պարզապես անհնար կլիներ...

Հարստացուցիչ ֆաբրիկայից պղնձի անխափան հոսքին է հետևում՝ անդադար կապի մեջ լինելով չորացման արտադրամասի գործընկերների հետ: Այսքանով հանդերձ, երբեք չի մոռանում իր արտաքին տեսքի մասին՝ սանրվածքը միշտ տեղը, ժպիտն էլ՝ դեմքին: Չթերագնահատելով տղամարդկանց՝ շտապում է անկեղծանալ «արտադրությունում կին լինելը օգնում է»:

Տեխնիկական վերահսկողության բաժնի տրամադրությանը միայն նախանձել կարելի է: Անչափ կանացի այս միջավայրում շատ պատասխանատու գործ է կատարվում. կոմբինատ ներմուծվող բոլոր ապրանքները, այդ թվում բարձված հսկա մեքենաները վերահսկող կանանց խիստ հայացքի ներքո են:

«37 տարի առաջ, երբ մտա կոմբինատ, փոխարինեցի ավագ սերնդի մասնագետներին, շուտով նաև ինձ կփոխարինեն: Կանայք ևս հոգեբանորեն պետք է պատրաստ լինեն վաստակած հանգստին, սերնդափոխություն պետք է լինի»,– ասում է տեխնիկական վերահսկողության բաժնի կշեռքավար Զոյա Վանեսյանը: Օրինակ, ինքը որոշել է՝ կենսաթոշակի անցնելուց հետո խմորեղենի արտադրամաս է բացելու:

– Էլեկտրականությունն ու կինը առաջին հայացքից են թվում անհամատեղելի,– ասում է Անահիտ Անդրեասյանը: Բարձր լարման ենթակայանում 9 կանանցով իրենց վրա են վերցրել անխափան էներգամատակարարման պատասխանատվությունը: Էներգաարտադրամասի վահանավար Անահիտ Անդրեասյանը պատմում է, որ գնահատված է աշխատանքում, տիրապետում է իր սիրած գործին, իսկ տարիների փորձն էլ օգնում է տարբեր իրավիճակներում ճիշտ կողմնորոշվելուն:

Կանանց մեկամսյա տոները ՀՊՄԿ-ի տոնացույցում առանձնահատուկ տեղ ունեն: Կոմբինատի հազարից ավելի կանանց համար գարնանային մեկամսյակի աշխատանքային օրերը սովորականից տարբերվում են:

Հերմինե Միքայելյան

Լուսանկարները՝ Նվեր Զելյայի

«37 տարի առաջ, երբ մտա կոմբինատ, փոխարինեցի ավագ սերնդի մասնագետներին, շուտով նաև ինձ կփոխարինեն: Կանայք ևս հոգեբանորեն պետք է պատրաստ լինեն վաստակած հանգստին, սերնդափոխություն պետք է լինի»

Սքանավորիր QR կոդը, դիտի՛ր տեսանյութը

Հայաստանի հանքային պաշարները Հայաստանի բացառիկ սեփականությունն են և չեն պատկանում որեւէ կոնկրետ անձի

Երևանի պետական համալսարանում տեղի ունեցավ հանքարդյունաբերությանը նվիրված միջֆակուլտետային քննարկում:

Թեման՝ «Հանքարդյունաբերության դերն ու նշանակությունը տնտեսության մեջ»: Մասնակցում էին նաև Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի ներկայացուցիչները: Ալտերնատիվ էներգետիկայի զարգացումը փոխում է գլոբալ տնտեսության կանոնները, և այս ֆոնին Հայաստանում հանքարդյունաբերության դերը դառնում է առավել կարևոր: Հայաստանի ամենից շատ վերահսկվող ոլորտը հանքարդյունաբերությունն է: Այս մասին մարտի 28-ին «Հանքարդյունաբերության դերն ու նշանակությունը տնտեսության մեջ» թեմայով քննարկման ժամանակ ասել է «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ (ԶՊՄԿ) գլխավոր տնօրենի տեղակալ, ընկերության տնօրենների խորհրդի անդամ Արտյոմ Պետրոսյանը:

Նա տեղեկացրել է, որ նման ձեռնարկություններն ամբողջ տարին հսկողության տակ են, բոլոր տեսչական մարմինները և այլ կարգավորող մարմիններն այնտեղ ստուգումներ են իրականացնում

այնպիսի մանրակրկիտությամբ, ինչպես ոչ մի ոլորտում:
Պետրոսյանը նշել է, որ դա հանգեցնում է նրան, որ ի սկզբանե որոշումներ են կայացվում՝ հետագայում հնարավոր խնդիրներից խուսափելու համար:
Միաժամանակ նա մատնանշել է, որ Հայաստանում աշխատանքային օրենսդրությունը հնացել է և չի համապատասխանում ժամանակի պահանջներին:
Սա, ըստ նրա, որոշակի խոչընդոտներ է ստեղծում նաև աշխատանքների պլանավորման հարցում: «**Նույնը վերաբերում է ներդրումային օրենսդրությանը, որը 31 տարեկան է**»,– նշել է ընկերության գլխավոր տնօրենի տեղակալը:
Նրա կարծիքով՝ ընդերքի հետ կապված օրենսդրությունը նույնպես լուրջ փոփոխություններ է պահանջում:
Նա տեղեկացրել է, որ, ի հեճուկս հաստատված առասպելի, Հայաստանի հանքային պաշարները Հայաստանի բացառիկ սեփականությունն են և չեն պատկանում որևէ կոնկրետ անձի:
Պետրոսյանը նշել է, որ կոնկրետ

հանքարդյունաբերական ձեռնարկության տեսակը կախված է նրանից, թե տվյալ հանքում ինչ մետաղ է գերակշռում: «**Օրինակ, Սոթքի ոսկու հանքավայրն այդպես է կոչվում, քանի որ այնտեղ ավելի շատ ոսկի կա, քան մյուս մետաղները, սակայն դա չի նշանակում, որ այնտեղ այլ մետաղներ չկան, դրանք կան**»,– ավելացրել է նա:
Պետրոսյանը նաև ասել է, որ ճյուղն ընդգրկում է գրեթե բոլոր մասնագիտությունները, որոնք ուսուցանվում են բուհերում:

«Առեղծվածային» պոչամբար. Միֆեր և իրականություն. բացահայտում են լրագրողները

ԶՊՄԿ-ն մշտապես հանրության ուշադրության կենտրոնում է: Կոմբինատը տարեցտարի ավելի ու ավելի շատ հյուրեր է ընդունում, այդ թվում նաև պարբերաբար ճանաչողական շրջայցեր են կազմակերպվում լրագրողների համար:

ԶՊՄԿ պոչամբարում՝ լրագրողներն էին...
Սքանավորիր QR կոդը, դիտի՛ր տեսանյութը

Լրագրողական հերթական այցի նպատակակետը պոչամբարն էր, և, ինչպես իրենք նշեցին, եկել էին տեղում՝ առաջին աղբյուրից տեղեկատվությունը ստանալու և միֆերը կոտրելու:

Հայաստանի առաջատար լրատվամիջոցների փորձառու լրագրողները՝ իրենց իսկ նախաձեռնությամբ, ընդ որում շատերն առաջին անգամ՝ բաց չթողնելով բացառիկ հնարավորությունը, ճանապարհվեցին դեպի Արծվանիկի պոչամբար: Նրանց խոսքերով, բնապահպանների հորինած միֆերի կենտրոնում հայտնված առեղծվածային պոչամբարի մասին պատկերացումները այլ են, իրականությունը՝ բոլորովին այլ:

Նաիրա Փայտյանը՝ «Հ2» հեռուստաալիքի լրագրողը, կիսվեց իր տպավորություններով. **«Պատկերացնում էի՝ տեսնելու եմ մի հրեշավոր, դեղնականաչավուն ինչ-որ լավա, հատկապես «գրանտակեր» բնապահպանական կազմակերպությունների նկարագրածով... Բայց լիովին այլ պատկեր եմ տեսնում»:**

«Գալ ու տեղում՝ սեփական աչքով տեսնելու, առաջին աղբյուրից հավաստի տեղեկատվություն ստանալու առումով՝ սա եզակի հնարավորություն է»,– նշում են հյուրերը: Մինչդեռ թվում էր՝ ոլորտը փակ է ու անձեռնմխելի:

Արմենուհի Հակոբյան՝ «Iravunk.com» կայքի խմբագիր.

«Ի դեպ, շատ ուրախացանք, որ կարող ենք գալ ու տեղում հասկանալ՝ իրավիճակն ինչպիսին է: Շատ ողջունելի է այս այցելության հնարավորությունը, և լավ կլինի, որ խոշոր ընկերությունները լրագրողներին այսպիսի հնարավորություններ ընձեռեն, որպեսզի գան իրականությունը տեսնեն, հասկանան ու ամեն բան ընկնի իր տեղը»:

«Հիմա ես այստեղ մաքուր օդ եմ շնչում ու տեսնում եմ, որ թափոններն այնպիսի վերամշակման են ենթարկվում, որ, ահա, այստեղ կանգնած, թվում է՝ Մալդիվներում ենք,– ծիծաղում է տնտեսական թեմաներով փորձառու լրագրող Լիանա Գյոզալյանը, չթաքցնելով տեսածից իր զարմանքը, ավելացնում է,– **մարդ չիմանար, որ պոչամբար է՝ կմտներ «ծովը», կլողար»:** Ժամանակին նա անդրադարձել է ԶՊՄԿ-ի ներդրումային ծրագրերին, միշտ հետաքրքրված է եղել ոլորտով, իսկ հիմա իր լսածն ու իմացածը համեմատում էր տեղում տեսածին:

Պոչամբարում իրականացվող բնապահպանական ծրագրերի հնարավոր ռիսկերի չեզոքացման, պրոգրեսիվ ռեկուլտիվացիայի, նոր մեթեոսարքավորումների, կառուցվելիք շրջանառու համակարգի մասին մանրամասն ներկայացրեց կոմբինատի Կայուն զարգացման գծով տնօրենի տեղակալ Տարոն Նավասարդյանը՝ պատասխանելով լրագրողներին հուզող բոլոր հարցերին:

Տարոն Նավասարդյանի խոսքով, 2024 թվականին պոչամբարի պատվարի վրա տեղադրվել է սեյսմիկ կայան, որը առաջինն է Հայաստանում: Սեյսմիկ ընկալիչները տեղադրված են ինչպես պատվարի, այնպես էլ մայրական ապարների վրա և ճշգրիտ տեղեկատվություն են փոխանցում պատնեշի ցանկացած շարժի վերաբերյալ:

«Արմենպրես» լրատվական գործա-

Տարոն Նավասարդյանի խոսքով, 2024 թվականին պոչամբարի պատվարի վրա տեղադրվել է սեյսմիկ կայան, որը առաջինն է Հայաստանում: Սեյսմիկ ընկալիչները տեղադրված են ինչպես պատվարի, այնպես էլ մայրական ապարների վրա և ճշգրիտ տեղեկատվություն են փոխանցում պատնեշի ցանկացած շարժի վերաբերյալ:

կալության թղթակից Մանվել Մարգարյանը շեշտեց, որ նկատելի է, թե ինչ մեծ աշխատանք է կատարված պոչամբարի և դրա շուրջ բնակավայրերի բարեկարգման ուղղությամբ:
Հայաստանի խոշորագույն հարկատուի գործունեությունը պարբերաբար հայտնվում է տարբեր լրատվամիջոցների ուշադրության կիզակետում: Շատ հաճախ կոմբինատի գործունեությունը առանց հիմնավոր փաստարկների քննադատվում է, հատկապես՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության տեսանկյունից: Եվ հենց հայկական լրատվամիջոցներից քաղված ինֆորմացիան Ադրբեջանը միջազգային ատյաններում օգտագործում է Հայաստանի դեմ: Մայրաքաղաքից ժամանած լրագրողները դա չեն հերքում:
Նաիրա Փայտյանի խոսքերով, հանքարդյունաբերության ոլորտից բացի, նաև ատոմակայանը հարևանների ուշադրության կենտրոնում է: Ադրբեջանը թիրախավորել է Հայաստանի համար կենսական նշանակություն ունեցող այդ ոլորտները: Մեզ անհրաժեշտ է զգուշավորություն դրսևորել, պետք է հասկանալ, որ մեզ 7 աչքով հետևում են, ու մեր դեմ են օգտագործում մեր լրատվամիջոցներում հայտնված ցանկացած տեղեկատվություն:
Ավարտելով շրջագայությունը, լրագրողները հեռացան՝ իրենց հետ տանելով բոլորովին այլ կարծիք և տեղեկատվության հարուստ պաշար:

Հերմինե Միքայելյան

Լուսանկարները՝ Նվեր Զեյայի

«ԱՐՏԱՎԱԶԴ». Թատերական արվեստի գլխավոր խորհրդանշական արարողության կենտրոնը Կապանն էր

Կապանը յոթ օր շարունակ հյուրընկալեց հանրապետության գրեթե բոլոր թատրոններին:

7 օր Հայաստանի հանրահայտ թատերախմբերը վայելեցին Սյունիքի հյուրասիրությունը, իսկ սյունեցի հանդիսատեսը՝ նրանց բեմական արվեստը: Կուլմինացիան մարտի 27-ն էր, երբ տեղի ունեցավ թատրոնի միջազգային օրվա խորհրդանշական արարողությունը՝ «Արտավազդ» մրցանակաբաշխությունը, որն այս անգամ մայրաքաղաքի փոխարեն կազմակերպված էր Կապանում: Դրամատիկական թատրոնի 90-ամյա հոբելյանը, կամերային ներկայացումների փառատոնը, նաև՝«Արտավազդը» Կապան էին բերել թատերական աշխարհի հայտնիներին: Մրցանակաբաշխությունից առաջ թատերական գործիչների միության նախագահ Հակոբ Ղազանչյանը մեդալներ ու դիպլոմներ հանձնեց Կապանի թատրոնի դերասաններին ու աշխատակիցներին՝ ոսկե մեդալի արժանացան Արթուր Գաբրիելյանը, Սլավիկ Ոսկանյանը և Անուշ Ավանեսյանը: Թատերական ամենամյա տոնին աջակցել էին ՀՊՄԿ-ն և Սյունիքի մարզպետարանի աշխատակազմը: Կապանի դրամատիկական թատրոնի դերասաններին ու ղեկավար անձնակազմին շնորհակալագրեր հանձնեց Սյունիքի մարզպետի տեղակալ Հայկ Հարությունյանը: ՄԵԾ «ԱՐՏԱՎԱԶԴ» մրցանակը տրվեց Կապանի Ա. Շիրվանզադեի անվան թատրոնի տնօրեն Տիգրան Աթայանին, Կապանի թատրոնի դերասաններ Նատալյա Բաղդասարյանն ու Արտավազդ Գրիգորյանն արժանացան «ԱՐՏԱՎԱԶԴ» մրցանակի՝ արժանապատիվ ծառայության համար: Լավագույն կին և տղամարդ դերակատարներ հռչակվեցին Ս. Սարգսյանի անվ. Համազգային թատրոնի դերասան Վարշամ Գևորգյանը և Ստանիսլավսկու անվ. Ռուսական դրամատիկական թատրոնի դերասանուհի Լիլիա Մուկուչյանը: «ԱՐՏԱՎԱԶԴ» 2025-ը կայացավ Կապանում՝ բոլոր ներկաների երախտագիտությունն ու ծափերը Կապանինն էին, որը դարձավ արվեստի մեծարման հրաշալի հավաքատեղի:

Տիգրանուհի Բաղալյան

Լուսանկարները՝ Նվեր Զեյայի

Սքանավորիր QR կոդը, դիտի՛ր տեսանյութը

ՄԵԾ «ԱՐՏԱՎԱԶԴ» մրցանակը տրվեց Կապանի Ա. Շիրվանզադեի անվան թատրոնի տնօրեն Տիգրան Աթայանին, Կապանի թատրոնի դերասաններ Նատալյա Բաղդասարյանն ու Արտավազդ Գրիգորյանն արժանացան «ԱՐՏԱՎԱԶԴ» մրցանակի՝ արժանապատիվ ծառայության համար:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹԱՏԵՐԱԿԱՆ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ
ԱՐՏԱՎԱՅՂ
ԱՄԵՆԱՍՅԱ ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅՈՒՆ
ԿԱՊ
ԿԱՊ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹԱՏԵՐԱԿԱՆ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ
ԱՐՏԱՎԱՅՂ
ԱՄԵՆԱՍՅԱ ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅՈՒՆ

ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ՝ ԲԱՐՁՐՈՒԹՅԱՆ ՎՐԱ ԱՇԽԱՏԵԼԻՍ՝

ինչպես օգտագործել պարաններով հասանելիության համակարգերը

Անվտանգության սարք

Սեղմիչ

Կարաբին

Աշխատանքային նստատեղ

Բլոկ

Անվտանգության շղթա կլանիչով



Պաշտպանեք մալուխը մաշվելուց



Նախատեսեք անհրաժեշտ տարածություն աշխատողների միջև

ԱՆԿԱԽ ԱՄՐԱԿԱՊՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
կիրառումը ճոպանով աշխատելու ժամանակ ՊԱՐՏԱԴԻՐ Է









Տեղադրեք ցանկապատեր

Փակող հանգույցներ ֆիքսված պարան-ների վրա

ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 2015 ԹՎԱԿԱՆԻՑ
Հասցե՝ ՀՀ Սյունիքի մարզ, ք. Քաջարան, Լեռնագործների 18
www.zcmc.am
press@zcmc.am